ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Բլամմո» ՍՊԸ-ի միջև 2020թվականի հունիսի 12-ին ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ՃԾ-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ

ք.Երևան **01.09.2020թ.**

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս ռեկտորի պարտականությունները կատարող Ա.Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու) մի կողմից, և «Բլամմո» ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Մ.Սարգսյանի, որը գործում է իր կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, Պատվիրատուի և Կատարողի 2020 թվականի հունիսի 12-ին ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ՃԾ-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.15 կետի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն համաձայնագրով Կողմերը համաձայնվում են Պայմանագրի ընդհանուր գինը սահմանել 4,924,840.8 (Չորս միլիոն ինը հարյուր քսանչորս հազար ութ հարյուր քառասուն ամբողջ ութ տասնորդական) ՀՀ դրամ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերենլեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ	«Բլամմո» ՍՊԸ
ք.Երևան, Նալբանդյան 128	ք.Երևան, Վարդաքնանց 10/37
Գանձապետարանի հաշվարկային հաշիվ	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ
900018001876	Հ/Հ 2205533349250000
ՀԿՀՀ՝ 01503224	ՀԿՀՀ 02817881
Ռեկտորի պարտականությունները կատարող՝ Ա.Գրիգորյան	Տնօրեն՝ Մ. Սարգսյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.